

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով
15-18 սեպտեմբերի 2016թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР
(АРЦАХА):
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция
15-18 сентября 2016г.
Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց
համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета
Университета Месроп Маштоц г.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400
L 657

Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորում, 2016

**ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱՏԱՇՐՁԱՆԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ
(1988թ. 20 ՓԵՏՐՎԱՐԻ)**

Իսկուհի ԱՎԱՆԵՍՅԱՆ

*Արցախի պետական համալսարան,
պատմության ամբիոն, պ.գ.թ.
iskuhi82@mail.ru*

1918-1920 թթ. սկիզբ առած Արցախյան գոյապայքարին բաժին հասավ Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը, որով Ղարաբաղը բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին: 1923թ. Ադրբեջանական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության կազմում ձևավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը՝ այդ կերպ սառեցնելով ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը:

Այսպես, վերելքներով և վայրէջքներով ընթացող պայքարը հենք հանդիսացավ 1988թ. փետրվարին սկիզբ առած համաժողովրդական ազատագրական շարժման համար: Արցախի ժողովուրդը բարձրացրեց իր ձայնն ի պաշտպանություն սեփական իրավունքների ու ազատությունների: Պահպանելով բոլոր գործող իրավական նորմերն ու ազատ կամքի արտահայտման ժողովրդավարական ձևերը՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը Հայաստանի հետ վերամիավորում պահանջեց: Այդ իրադարձությունը շրջադարձային եղավ ոչ միայն արցախցիների համար, փաստորեն, դրանք կանխորոշեցին հայ ժողովրդի հետագա ուղին:

1988թ. փետրվարին մարզի նախաձեռնող խմբերին հաջողվեց ձախողել Ադրբեջանի ԿԿ կենտկոմի ներկայացուցիչների պլանները և փետրվարի 13-ին Ստեփանակերտում անցկացնել համաժողովրդական հանրահավաք: Այդ օրը թերևս դարձավ Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման ժամանակակից փուլի ելակետը:

Դեռևս շարժման նախապատրաստական փուլում՝ 1985-1987թթ. լայն բացատրական աշխատանք էր տարվում ԼՂԻՄ ճնշող մեծամասնություն կազմող հայ բնակչության շրջանում: Դրան հաջորդեց Մոսկվա՝ խորհրդային ղեկավարությանն ուղղված հանրագրերի հոսքը, իսկ 1988թ. փետրվարին, կայացավ առաջին բազմամարդ հանրահավաքները, ցույցերը, երթերը: Այդ գանգվածային միջոցառումների կազմակերպման և իրականացման գործում մեծապես կարևոր էր նաև կանանց դերակատարությունը:

Հարկ է նկատել, որ մեր բազմադարյա պատմության ընթացքում մշտապես կենսականորեն կարևորվել է կնոջ դերը, մանավանդ, ազգապահպանման գործում: Հավատարիմ մնալով մայր լինելու իր վեհ առաքելությանը, հայուհին միաժամանակ սերնդե-սերունդ հանդես է եկել որպես ազգային ինքնության ակունք ու պահպան:

Փետրվարի 13-ի հանրահավաքում ելույթ ունեցողների թվում էր նաև Արաքսյա Հայրապետյանը: Դատապարտելով Ադրբեջանի իշխանությունների հակահայ քաղաքականությունը, նա իր ելույթում կոչ արեց հասնել հարցի արդարացի լուծման՝ մարզը դուրս բերել Ադրբեջանի կազմից, որն էլ հանդիսանում էր արցախցիների կամքը¹: Հարկ է նկատել, որ ելույթ ունեցողների խոսքը մասնակիցների համար ոգևորիչ էր, և հավատ կար, որ արցախահայության նպատակը մոտ է իրականացմանը:

Առաջին գանգվածային ցույցից անմիջապես հետո՝ փետրվարի 14-ին, Ստեփանակերտ տեղափոխվեց 12 միավոր տեխնիկայից բաղկացած տանկային շարասյուն²: Հաջորդ երկու-երեք օրերին ավելի մեծ թվով զինվորներ հայտնվեցին քաղաքում³: Ստեղծված իրավիճակը թելադրում էր իրագործել կոնկրետ քայլեր: Այսպես՝ սկսվեց ԼՂԻՄ շրջանների ժողովրդական պատգամավորների, այդ թվում կին-պատգամավորների դիմումների հոսքը շրջանային խորհուրդներ՝ շրջանային արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով՝ ԼՂԻՄ-ի հարցը քննարկելու համար:

Պետք է ասել, որ այդ օրերին մարզի շրջաններում և Ստեփանակերտում ամեն ինչ արվում էր մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի կայացման համար: Կանայք, որոնք մեծ ակտիվություն էին ցուցաբերում նախապատրաստական աշխատանքներում, օգտագործում էին բոլոր հնարավոր միջոցները՝ արտահերթ նստաշրջանը կյանքի կոչելու համար: Հավատ կար, որ նստաշրջանի ճիշտ որոշումը կտանի հարցի դրական լուծման:

Հատկանշական է, որ բացի Շուշիի շրջանից, մարզի բոլոր շրջաններում շրջխորհուրդների արտահերթ նստաշրջաններ էին հրավիրվել ու միաձայն որոշումներ կայացվել մարզխորհրդի արտահերթ նիստ հրավիրելու մասին:

Մարզխորհրդի նստաշրջանին մասնակցելու համար, փետրվարի 20-ի առավոտյան սկսեցին Ստեփանակերտ ժամանել պատգամավորները, չնայած այդ օրը Ստեփանակերտում գտնվող Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Զ. Բազիրովի հրահանգով ամենուրեք խոչընդոտներ էին ստեղծվում, որպեսզի պատգամավորները շրջաններից չկարողանան հասնել մարզկենտրոն⁴: Նախքան նստաշրջանի սկսելը ժամը 16⁰⁰-ին Ստեփանակերտում հրավիրվեց ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման քաղաքային խորհրդի 4-րդ արտահերթ նստաշրջանը, որտեղ ելույթ ունեցան նաև Մարգո Բալասանյանը (մարզկենտրոնի Ս. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի, ժողովրդական արտիստ), Լաուրա Ղարամյանը (մարզի մշակույթի բնագավառի արհմիության կոմիտեի նախագահ), Իրինա Գևորգյանը (Ստեփա-

¹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 25:

² **Բալայան Վ.**, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 282:

³ **Արշակյան Ա.**, Արցախյան գոյապայքարը 1985-1992թթ. Երևան, 2004, էջ19:

⁴ **Գրիգորյան Ա.**, Հաղորտին գոյամարտի բովում, Ստեփանակերտ, 2012, էջ17:

նակերտի կոնդենսատորների գործարանի բանվորուհի) և Հասմիկ Միքայելյանը (Ստեփանակերտի քաղկոմի քարտուղար)¹: Վերջիններս ոչ միայն իրենց մտահոգությունները հայտնեցին մարզում ստեղծված իրավիճակի կապակցությամբ, այլ նաև պահանջեցին մարզխորհրդի նստաշրջանում ընդունել որոշում, որը պետք է արտահայտեր արցախահայության կամքը²:

Այսպիսով, ԼՂԻՄ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու և մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու հարցի քննարկումը դարձավ հրամայական պահանջ:

Մարզխորհրդի նստաշրջանի անցկացման համար ստեղծվեց նախաձեռնող խումբ, որի կազմում ընդգրկվեցին շարժման մի շարք նվիրյալներ, այդ թվում ժաննա Գալստյանը: Կազմակերպիչների ուսերին էր ծանրացած նստաշրջանի անցկացման և ակնկալվող պատմական փաստաթղթի ապահովման պատասխանատվությունը:

Ուժերի մեծ լարումով 1988թ. փետրվարի 20-ի երեկոյան ժամը 20-ն անց 20 ռուպեին ԼՂԻՄ աշխատվորների պատգամավորների 20-րդ գումարման մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանն սկսեց աշխատանքները, որին մասնակցեցին 111 պատգամավորներ, այդ թվում՝ 49-ը կին-պատգամավորներ³: Պատմական նիստը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհրդի միջնորդությունը՝ մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու հարցը»: Ելույթ ունեցող 45 պատգամավորներից 27-ը՝ կին-պատգամավոր էին: Նրանք իրենց ելույթներում համոզիչ փաստերով մատնանշում էին ԼՂԻՄ-ի 65 տարվա անցած դառնագին ուղին, ադրբեջանական ԽՍՀ կազմում գտնվելու պատճառով այդ ճանապարհին հայտնված ու երբեք էլ չլուծված հարցերը, որոնք խանգարել են մարզի տնտեսական և մշակութային կյանքի զարգացման բնականոն ընթացքին, Ղարաբաղի հայությանը ետ պահել սոցիալական, ազգային և հոգևոր վերելքի այն մակարդակից, որը ձեռք է բերվել Հայկական ԽՍՀ-ում: Այդ նպատակով նրանք առաջարկում էին ընդառաջել Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի ցանկությանն ու ինքնորոշման անկապտելի իրավունքին՝ լուծել մարզը Հայաստանին միավորելու հարցը, ինչպես նաև միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ նույն հարցի լուծմանն աջակցելու և

¹ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 186, թ. 7:

² Նույն տեղում, թ. 24-26:

³ Պատմական նստաշրջան, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ստեփանակերտ, 2008, էջ 27: Մասնակցում էին կին-պատգամավորներ՝ Արմիդա Գաբրիելյանը, Սուրայա Գրիգորյանը, Ռախսա Գրիգորյանը, Ռիտա Մնացականյանը, Գոհար Գրիգորյանը, ժաննա Մելքումյանը, Լիդիա Սարգսյանը, Էսմիրա Առաքելյանը, Լիդա Պետրոսյանը, Անժելա Հակոբյանը, Նարինե Ավանեսյանը, Լուսին Հակոբյանը, ժաննա Մովսիսյանը, Ռիտա Նալբանդյանը, Լաուրա Համբարձումյանը, Ասյա Ղազարյանը, Ամայա Հակոբյանը, Անիկ Սուքիասյանը, Ամայա Աբրահամյանը, Ժուլիետա Լալայանը, Ռազմելա Անանյանը, Լենա Ղահրամանյանը, Ավարդ Սարգսյանը, Նվարդ Պետրոսյանը, Թամարա Գալստյանը, Սիլվա Արզումանյանը, Չինա Բաբայանը:

վերջնական որոշում ընդունելու համար: Նրանցից յուրաքանչյուրը ելույթի կարճ և բովանդակալից հաղորդմանն ավելացնում էր նոր փաստեր, սեփական դիտարկումներ, որոնք ցույց էին տալիս, որ մարզն իր ինքնավարության ամբողջ ընթացքում ազգային զարգացման տեսակետից պարզապես գտնվել է փակուղու առաջ, որովհետև իրական պատճառներին միշտ էլ գումարվել է հանրապետության պետական և կուսակցական ղեկավարների գաղափարախոսական քաղաքականությունը՝ մարզի հայության ազգային առանձնահատկությունների, հոգևոր զարգացման օրինական պահանջների նկատմամբ:

Հաշվի առնելով պատմական այս որոշման կարևորությունը՝ նպատակահարմար ենք գտնում ներկայացնել կին-պատգամավորներից Արմիդա Գաբրիելյանի ելույթը: Ներկայացնելով հայ ազգի բարիդրացիական հարաբերությունները տարբեր ազգերի, ժողովուրդների հետ, նա հավաստեց. «Մի բան պարզ է. ուրիշ ազգերին սիրել կարողանալու համար պետք է սիրել նախ իր ազգին, պաշտպանել իր ազգի արժանապատվությունը: Մի՞թե արժանապատվության կոխկրտում չէ, երբ հայ մանուկն օրորոցից սկսած անհաղորդ է հայ երգին, հայ մշակույթին: Մեզանից ո՞վ է Կոմիտաս լսում, ո՞վ է քաջաճանոթ մեր պատմությանը: Մեր երեխաները դպրոցում չորս լեզու են սովորում, սակայն չգիտեն հայ ժողովրդի պատմությունը... Մեր պահանջը հոգևոր սնունդն է, մենք հայ մնալ ենք ուզում, ազգության ապագան ենք ուզում: Մեր սկսածն արդար, ազնիվ գործ է, արդարացի պահանջ: Ուրեմն ոչ մի նահանջ՝ հանուն Ղարաբաղի միացման Հայաստանին...»¹:

Կին-պատգամավորներն այդ փաստերը, օրինակները նշում, քննում, դատապարտում էին, միաժամանակ համոզված հաստատում, որ այդ վիճակից դուրս գալու միակ ճանապարհը Ղարաբաղի վերամիավորումն է Մայր Հայրենիքին:

Արտահերթ նստաշրջանն ընդունեց որոշում, որտեղ, մասնավորապես, ասվում է. «...միջևորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցին դրական լուծում տալու մասին»²:

Փաստորեն նստաշրջանի որոշումը հիմնվել է ԽՍՀՄ գործող Սահմանադրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումների ժողովուրդներին և հոծ ապրող ազգային խմբերին ԽՍՀՄ-ից կամ միութենական հանրապետությունից դուրս գալու և իրենց ճակատագիրը տնօրինելու հնարավորություն են ընձեռում: Նմանօրինակ որոշումը պայմաններ ստեղծեց ԼՂՀ կազմավորման և նրա միջազգային ճանաչման գործընթացը տանել համաշխարհային հանրության կողմից ընդունվող իրավական նորմերով:

Այսպիսով, արցախահայության անցած ժամանակի պատմությունը համոզում է, որ Ադրբեջանի կողմից իրագործված խտրականությունը

¹ Նույն տեղում, էջ 41:

² «Սովետական Ղարաբաղ», 1988, 21 փետրվարի, թիվ 5:

հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, հայ ազգաբնակչությանը ստիպել է դիմել վճռական քայլերի՝ Արցախը վերամիավորել Մայր հայրենիքին՝ Հայաստանին: Գոյապայքարի այս նոր փուլում մարդիկ վերստին ճշակել են մայրության ու կանացիության կշռադատված ու խոհեմ վարվեցողության պտուղները: Հանապազօրյա կենցաղային հոգևատանջ աշխատանքներում, հաճախ առավել շատ աշխատանքային մասնակցությունը հանրային տնտեսությունում, նրանց մեջ չեն խամրել անձնուրացություն դրսևորելու նրանց կարողությունը՝ հանուն արդարության հաղթանակի, և հայ կինը գնացել է առճակատման:

Իսկուհի Ավանեսյան

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՁԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ (1988թ. 20 ՓԵՏՐՎԱՐԻ)

**Բանալի բառեր՝ կանայք, համազգային, շարժում, մասնակցություն,
նամակներ, ցույցեր**

1988թ. Ղարաբաղյան շարժման ժամանակ Արցախի կանայք իրենց դրսևորեցին ոչ միայն պայքարի գաղափարախոսներ և նրա կրողներ, այլև որպես հայրենիքի պաշտպաններ:

Դեռևս ընդհատակյա փուլում նրանք ընդգրկվեցին նախաձեռնող խմբերի կազմում և նպաստեցին, որպեսզի շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի: Այնուհետև դրան հաջորդեց հանրագրերի հոսքը Մոսկվա՝ խորհրդային ղեկավարությանը, ապա 1988-ի փետրվարին՝ առաջին բազմամարդ հանրահավաքները, ցույցերը, երթերը: Այդ ամենին միացած կանայք առաջ մղելով Արցախի հիմնահարցը, խորհրդային կայսրապետության վերադաս մարմիններից պահանջեցին այն լուծել ժողովրդավարական պահանջներին ու ազգերի ինքնորոշման սկզբունքներին համապատասխան:

Искуи Аванесян

**УЧАСТИЕ ЖЕНЩИН В ИСТОРИЧЕСКОЙ СЕССИИ
(20 ФЕВРАЛЯ 1988Г.)**

Ключевые слова: *женщины, общенациональный, движение, участвовать, письма, демонстрации*

В 1988г. Карабахском движении женщины Арцаха проявили себя не только в качестве носителей идеологов и организаторы борьбы, но и как защитницы отчизны. Женщины, участвуя в этом деле, еще на подпольном этапе вошли в состав инициативных групп и способствовали тому, чтобы движение превратилось в всенародную борьбу. Затем этому последовал поток петиций в Москву- советскому руководству, затем в феврале 1988 года- первые многолюдные митинги, демонстрации, шествия. Присоединившиеся к тому делу женщины, продвигая карабахскую проблему, потребовали от вышестоящих органов советской власти решить ее в соответствии с демократическими требованиями и принципами самоопределения наций.

Iskuhi Avanesyan

**WOMEN'S PARTICIPATION IN HISTORIC SESSION
(20th FEBRUARY 1988)**

Key words: *women, national, movement, participate, letters, demonstration*

During the Karabakh movement, which started in 1988, the Armenian women weren't only struggle ideologists, organizers, public and political figures, but also the defenders of the Motherland.

The women participating in it were involved in the secret stage of the initiative groups and assisted the movement to become a national struggle.

Then the flow of petitions to Moscow to the Soviet Leaders followed, later in February 1988 the first crowded meetings, demonstrations and marches followed.

The women participating in all these movements moving forward the Artsakh problem demanded the higher authorities of the Soviet Empire to solve the problem in accordance with the democratic demands and principals of the nation self-determination.